ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 110-Ա

ք. Երևան

«Ա-ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի օգոստոսի 29-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 44 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի օգոստոսի 4-ից 8-ն իրականացրել է «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «Ա-ԹԻՎԻ» տեսալսողական ծրագրի 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքները համադրվել են Հեռարձակողի կողմից էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր ներբեռնված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հետ, որի արդյունքում արձանագրվել է Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի օգոստոսի 29-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 44 վարչական վարույթը՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 29-ին կազմված տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն):

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների համադրություն ընկերության կողմից էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր ներբեռնված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հետ, որի

արդյունքում պարզվել է, որ 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ) Հեռարձակողի «Ա-ԹԻՎԻ» ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները կազմել են Հեռարձակողի շաբաթական եթերաժամի 14,97 տոկոսը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2025 թվականի սեպտեմբերի 01-ին թիվ Ե/04/04.1/696-25 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 02-ի թիվ Օ-Ն 26 գրությամբ ներկայացրել է պարզաբանում:

Մասնավորապես՝ պարզաբանման մեջ «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ելենա Արշակյանը նշել է.

«(...) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից 2025թ-ի օգոստոսի 29-ին հարուցված թիվ 44 վարչական վարույթի շրջանակներում «Ա-ԹԻՎի» ՍՊԸ-ին /այսուհետ՝ Ընկերություն/ 02.09.2025թ-ին ուղարկված Ե/04/04.1/696-25 ծանուցման համաձայն հայտնում ենք, որ Ընկերության եթերացանկի տեխնիկական փոփոխության հետեւանքով Ընկերության կողմից տեղի է ունեցել շեղում «Տեսալսողական Մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված մանկական, կրթական, մշակութային և մարզական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը կազմելու պահանջի մասով:

Հայտնում ենք, որ Ընկերությունը արդեն ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ առաջիկա՝ 2025թ-ի աշնանային եթերաշրջանից սկսած առանց շեղումների ապահովելու Օրենքով սահմանված մանկական, կրթական, մշակութային և մարզական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը կազմելու պահանջը:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից հետևողականորեն կձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները հետագայում բացառելու նմանատիպ շեղումները:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:»:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ սահմանվել է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելվածի 3-րդ և 4-րդ կետերը սահմանում են՝

«3.Տեսալսողական հաղորդումները լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների կողմից պետք է գրանցվեն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում:

4.Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին:»:

Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևի և վարման կարգի համաձայն՝ Հեռարձակողը տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրում է նշված կարգի 6-րդ կետի 1)-ից մինչև 6)-րդ ենթակետերում նշված տեղեկությունները, և դրանց գրանցումը պարտադիր պայման է Հեռարձակողի համար:

Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգի հավելվածի 6-րդ կետի 4)-րդ ենթակետը սահմանում է.

«6.Տեսալսողական մեդիածառայություն մատուցողները տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրում են հետևյալ տեղեկությունները՝

4) տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությունը,»:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը տեսալսողական հաղորդումները հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքի սահմանող դրույթները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2022 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 347, գործողության ժամկետը՝ 24.12.2022թ.-24.12.2029թ.):

Վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողից ստացած պարզաբանման վերաբերյալ Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հեռարձակողի ներկայացրած այն հիմնավորումը, թե եթերացանկի տեխնիկական փոփոխության արդյունքում տեղի է ունեցել շեղում Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջից՝ շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը մանկական, կրթական, մշակութային և մարզական հաղորդումներով ապահովելու մասով, չի կարող դիտվել որպես բավարար հիմք Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված

իրավախախտումը չարձանագրելու և վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում, Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթի պահանջը, որի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք, որ

Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ իրենց ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը, որը Հեռարձակողի կողմից չի պահպանվել 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթվա ընթացքում):

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝

Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 42-րդ հոդվածի 18-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Ա-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 04
ք.Երևան